



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021. թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ, և 29-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով Պալատի երիտասարդական խորհուրդը 2021 թվականի ընթացքում փաստաբանի արտոնագիր ստացած փաստաբանների կազմից համալրելու անհրաժեշտությունը,

նկատի ունենալով փաստաբան Ստեղա Սայադխանյանի համաձայնության առկայությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի անդամ նշանակել փաստաբան **Ստեղա Սայադխանյանին** (արտոնագիր թիվ 3129)՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Սիմոն Բաբայան

22 դեկտեմբեր 2021թ.
թիվ 305-Ա
ք. Երևան